

Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանա՞ս ի տէր հասուցէր.
Թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդն ձեզ՝ զտէրն յիշեցէր:
Այժմ տեսնենք պ. Ասատուրի «մշակածը»:

Նայեց պանդուխտն իր սիրածին կանչեց այսպէս.
«Դնձ նայեցէր»:

Ես թողնում եմ իմ եարն աւանդ, վարդերի մէջ փափայեցէր.
Եթէ դառնամ, տիրոջ հետսցրէք աւանդն անխախտ իր կաթողին,
Իսկ թէ մեռնեմ, աւանդըս ձեզ, ողորմի տուէք տիրոջ հոգին...»

Քուչակը թւր, պ. Ասատուրը թւր: Առաջինն ասում է
իմ ետքը «վարդի մէջ պահեցէք». երկրորդը՝ «վարդի մէջ փայ-
փայեցէք». առաջինը՝ «թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդը
ձեզ՝ զտէրն յիշեցէք.» երկրորդը՝ «իսկ թէ մեռնեմ աւանդս ձեզ,
ողորմի տուէք տիրոջ հոգին...» Նախ պէտք է լինի «հոգուն»
և ոչ «հոգին», որովհետեւ «հոգին ողորմի տալ» հայերէն չէ. և
յետոյ, «յիշեցէք»-ը, պարզ ու յուզիչ «յիշեցէք» առել է «հո-
գուս ողորմի տուէք» պառակաւան ձևը...

Նոր օրինակներ տալ աւելորդ ենք համարում: Մենք պա-
տահական նմոյշներ բերինք Քուչակի տաղերի իւրաքանչիւր
տեսակից. «սիրոյ», «այլաբանական» և «պանդխտի» երգերից:
Բաղդատութիւնը, անկասկած, պ. Ասատուրի համար անգուլ է:

Տ. Զատեն

Ա. Մարգար. «Երախտի» պատմութիւն. 1904, Բագու, դինն է 10 կոպէկ:

Ինտելիգենցիայի, իհարկէ, ոչ բուրժուական ձգտումներով
տոգորուած ինտելիգենցիայի՝ գաւառներում և գիւղերում գոր-
ծելու հարցը, ուսս գրական որոշ ուղղութեան գործիչների ազ-
դեցութեան տակ արծարծուել է և մեր մամուլի և գրականու-
թեան մէջ: Մեզանում նոյնպէս հնչել է. «դէպի գաւառ, դէպի
գիւղ» յայտնի կոչը: Սա մի հարց է սակայն, որ ինչպէս ամեն
հասարակական երևոյթ՝ կարելի չէ միայն զգացմունքներով
վճռել:

Եթէ նոյնիսկ իբրև աքսիոմ՝ ընդունէինք, թէ մտաւորա-
կանութեան գիւղերում գործունէութիւնը աւելի նպատակայար-
մար է—ինչ որ դժուար է հաստատել, որովհետեւ քաղաքներում,
ինդուստրիական կենտրոններում տնտեսական և սոցիալական
յայտնի պայմանների շնորհիւ ազատագրումի խօսքին համար
աւելի նպաստաւոր հող կայ—պէտք էր դարձեալ մեր ուշա-
դրութիւնից չվրիպէր այն էական կէտը, թէ գիւղերը մի աս-

տիճան բեղուն հող կարող են մատակարարել ինտելիգենտ գործիչի «բարի» խօսքի համար:

Մարդը մի վերացական ըմբռնում, մի աբստրակցիա չէ, այլ մտաւոր, բարոյական, ֆիզիքական պահանջներ ներկայացնող մի օրգանիզմ: Արդ, տարէք այդ օրգանիզմը մի այնպիսի միջավայրում, ուր նա իր պահանջները գոհացնելու հշմի հնար, հշ մի միջոց չունի, նա այնտեղ հակառակ իր բարի կամեցողութեան, օգտակար լինելու անկեղծ ցանկութեան, արմատ չէ կարող բռնել: Մինչև որ մեր գիւղերը չօժտուին գործիչների իմացական, բարոյական կեանքի պահանջներին բաւականութիւն տալու գոնէ միջակ յարմարութիւններով, ինտելիգենցիայի չուն դէպի երկրի խուլ անկիւնները՝ ցանկալի, բայց անիրագործելի մի իդէալ պիտի մնայ:

Ահա այս հարցն է, որ պ. Ա. Մարգար փորձում է լուծել իր «Երախտիք» պատմութեամբ: Բայց այս կարգի հարցերը, հաղիւթէ այդ միջոցով կարելի լինի լուծել: «Երախտիք» մասնաւորապէս իբրեւ որոշ ձգտումի, որոշ գաղափարի պաշտպանութեան համար արտադրուած գործ, բնականաբար թոյլ է գեղարուեստական հիւսուածքի կողմից: Լաւ կը լինէր, որ գրական ասպարէզ իշնող մեր սկսնակ ոյժերը, փոխանակ թէզանք պաշտպանելու, տենդենցիօզ գրականութիւն անելու, ջանային անկեղծօրէն պատկերացնել մեզ՝ իրանց զգացած, ապրած, դիտած կեանքը:

Տենդենցիօզ գրականութեան մէջ յաջողելու համար հարկաւոր է մեծ տաղանդ:

Տ. Չ.

Նար-Պոս. «Նորածին մանուկը». Վաղարշապատ. 1904. Թ. գինն է 3 կ.

Նար-Պոսը, որոշ շրջաններում, բեղբորիստ գրողի անուն է վայելում... Բայց, յամենայն դէպս, այն «պատմութեամբ»՝ «Նորածին մանուկը»-որ ունենք մեր աչքի առաջ, գեղարուեստական հշինչ չի պարունակում: Շաբլոն նկարագրութիւններ, խճողուած օտար, թուրքերէն անհամար բառերով, ինչպէս «քուրք, դերիա չիլիա, դումար, ջիբ, դասար, չիթ, խալիչ, հախ, եսփնջի, եայն» և մտացածին, շինծու, կեղծ դրութիւններ, որոնք իր թէ պէտք է «կեանքի պատկեր» կազմեն—ահա ի՞նչ է «Նորածին մանուկը»: Նար-Պոս մի աղքատ, չքաւոր մօր խեղդամահ է անել տալիս իր զաւակին, իր արգանդի պտուղին: Այդպիսի եզակի դէպք, մեր երկրում դժուար է ըմբռնել: Եւ այն էլ ի՞նչպիսի մօր